ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 01/2021

ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 18 հունիսի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Ազգային ժողովի պատգամավոր, Ընտրությունների վերահսկման կոմիտեի ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանի դիմումը, **պարզեց**.

Դիմումի բովանդակությունը և պահանջը

1. 2021 թվականի հունիսի 11-ին Հանձնաժողովը փոստային առաքմամբ ստացել է Ազգային ժողովի պատգամավոր, Ընտրությունների վերահսկման կոմիտեի ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանի 2021 թվականի հունիսի 9-ի դիմումը:
2. Դիմումատուն նշել է, որ 2021 թվականի հունիսի 4-ին ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը աշխատանքային ժամին իրականացրել է առաջիկա արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանակում քարոզչական բնույթ կրող գործունեություն՝ հանդիպումներ ունենալով Արարատի մարզի Գեղանիստ, Հովտաշեն, Մրգավետ համայնքներում և Արտաշատ քաղաքում:
3. Դիմումատուն նշել է նաև, որ Նիկոլ Փաշինյանը արձակուրդ է գնացել միայն 2021 թվականի հունիսի 7-ին՝ վարչապետի թիվ 622-Ա որոշմամբ:

4. Դիմումին կից ներկայացվել է 2021 թվականի հունիսի 4-ին քարոզչական բնույթ կրող գործունեության վերաբերյալ տեսանյութ պարունակող սկավառակ և ՀՀ վարչապետի պաշտոնակատարին արձակուրդ տրամադրելու մասին 07.06.2021 թվականի թիվ 622-Ա որոշման պատճենը:
5. Դիմումատուն նշել է, որ Նիկոլ Փաշինյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող անձ է և վկայակոչելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումը, ինչպես նաև 22-րդ, 23-րդ, 24-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված վարքագծի սկզբունքները՝ գտել է, որ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի՝ իր դիմումում նկարագրված վարքագիծը դուրս է հանրային էթիկայի թույլատրելի սահմաններից: Մասնավորապես՝ փաստարկել է այն, որ հունիսի 4-ին հանրային ռեսուրսը՝ վարչապետի պաշտոնակատարի աշխատաժամանակը, օգտագործվել է ակնհայտ անարդյունավետ և անխնա:
6. Վերոնշյալով պայմանավորված՝ դիմումատուն պահանջել է Հանձնաժողովից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ընդունել եզրակացություն ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները խախտելու վերաբերյալ:

Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ հիմքերի, վարույթ կարող է հարուցվել յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա:
8. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների

ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ:

9. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից:

Նշված իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը իրավասու մարմնին պարտավորեցնում է դիմումի հիման վրա վարույթ հարուցելու հարցի լուծմամբ գնահատել դիմումի առարկան (պահանջը)՝ ելնելով Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, որի արդյունքում միայն իրավասու վարչական մարմինն իրավունք ունի որոշում կայացնել համապատասխան վարույթ հարուցելու կամ մերժելու մասին:

Դիմումի առնչությամբ որոշում կայացնելու համար վերը նշված իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ դիմումի բովանդակությանը և պարզել, թե արդյո՞ք գործող իրավակարգավորումների շրջանակներում առկա է համապատասխան արարք (դեպք), որը ենթակա է գնահատման Հանձնաժողովի կողմից: Մասնավորապես՝

- Դիմումատուն հստակ մատնանշել է, որ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել առաջիկա արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանակներում,

- Այն իրենից ներկայացրել է քարոզչական բնույթ կրող գործունեություն՝ քարոզչական բնույթ կրող հանդիպում:

10. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
11. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք), ի թիվս ընտրությունների կազմակերպման և անցկացման այլ կարգավորումների, կանոնակարգվում է նաև նախընտրական քարոզչության գործընթացը: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքով են սահմանվում նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները, քարոզչության սահմանափակումները, ինչպես նաև հսկողությունը սահմանված կարգավորումների պահպանման նկատմամբ:
12. Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանվում են նախընտրական քարոզչության սահմանափակումները, այդ թվում նաև ծառայողական պարտականություններ իրականացնողի կողմից ընտրական գործընթացների շրջանակներում վարքագծի սահմանափակումները:
13. Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝

տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:

Վերոնշյալ իրավական կարգավորումից հետևում է, որ Ընտրական օրենսգրքով, մասնավորապես, նախատեսված են հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների համար նախընտրական քարոզչության իրականացման սահմանափակումներ:

14. Մեկնաբանելով Հանձնաժողովի կողմից դիմումի առնչությամբ որոշում կայացնելու լիազորությունները՝ ՀՀ Վարչական դատարանը թիվ ՎԴ/1836/05/20 վարչական գործով 2021 թվականի ապրիլի 27-ին կայացված վճռով գտել է, որ Հանձնաժողովը վարույթի հարուցման փուլում քննարկման առարկա է դարձնում դիմումի առերևույթ ընդունելիության մասով բովանդակությանը ներկայացվող պահանջները, այսինքն՝ որքանով է դիմումով բարձրացված հարցն իր բնույթով վարույթ հարուցելու հիմք հանդիսանում և որքանով է այն գտնվում հանձնաժողովի իրավասությունների ներքո (...): Դատարանը եզրահանգել է, որ (...) այն դեպքում, երբ դիմումով բարձրացվել է հարց, որն առերևույթ դուրս է հանձնաժողովի կողմից հարուցման ենթակա վարույթների նյութական առարկաների շրջանակից, ապա դիմումով վարույթ հարուցելը մերժվում է:

Համադրելով Ազգային ժողովի պատգամավոր, Ընտրությունների վերահսկման կոմիտեի ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանի կողմից ներկայացված դիմումի բովանդակությունը Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող իրավական նորմերի հետ՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ դիմումով ներկայացված համապատասխան արարքի (դեպքի) գնահատումը դուրս է Հանձնաժողովի իրավասությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ազգային ժողովի պատգամավոր, Ընտրությունների վերահսկման կոմիտեի ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանի կողմից 2021 թվականի հունիսի 11-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Նաիրա Զոհրաբյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**